ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.31/26699-2025

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-1124-09.07.2025-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2025 թվականի օգոստոսի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 710 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Ագնեսա Առաքելյան
Ազգային ժողովի հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ
Հեռ. 515403
Էլ փոստ՝ agnesa.arakelyan@gov.am

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-1124-09.07.2025-**ՊԻ**-011/0) **ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-1124-09.07.2025-ՊԻ-011/0) վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չունի:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1124-09.07.2025-**ՊԻ**-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2021 թվականի մայիսի 5-ի քրեական օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 187.1-ին հոդվածով.

«Հոդված 187.1 Բուժաշխատողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը

1. Բուժաշխատողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը հարյուր ժամ տեւողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է բուժաշխատողի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տեւողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:»:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ նաև՝ Օրենք) հստակ սահմանվել են բժշկական ծառայությունների մատուցման ոլորտում ներգրավված սուբյեկտների շրջանակը և իրականացվող գործունեության բնույթը: Մասնավորապես, սահմանվել են «բուժաշխատող» հասկացությունը առողջապահության բնագավառում մասնագիտական գործունեության տեսակները և հիմքերը, ինչպես նաև բուժաշխատողների իրավունքներն ու պարտականությունները: Այսպես, բուժաշխատողը՝ առողջապահության բնագավառում գործունեություն իրականացնող, իսկ սույն օրենքով նախատեսված դեպքերում նաև մասնագիտական գործունեություն իրականացնող ու դրա համար համապատասխան բժշկական մասնագիտական կրթություն, որակավորում,

մասնագիտացում և նախատեսված շարունակական մասնագիտական զարգացման հավաստագիր ունեցող, ինչպես նաև ոչ մասնագիտական օժանդակող գործունեություն իրականացնող ֆիզիկական անձն է (Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետ): Միևնույն ժամանակ, Օրենքը հստակ սահմանել է նաև առողջապահության բնագավառում մասնագիտական գործունեությունը, որն իրականացնում է բուժաշխատողը,

առողջապահության բնագավառում անձի կողմից, իր կրթությանը, որակավորմանը և լիազոր մարմնի հաստատած մասնագիտական բնութագրին համապատասխան, իր իրավասության շրջանակներում օրենքներին, այլ իրավական ակտերին, իր

աշխատանքային

պարտականություններին համապատասխան աշխատանքների իրականացումն է (Օրենքի 2- րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետ): Բացի այդ, Օրենքով սահմանվում է նաև բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձանց հասկացությունը,

համաձայն որի՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող է համարվում օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված, բժշկական օգնության և սպասարկման որոշակի տեսակ կամ տեսակներ իրականացնող անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձը՝ անկախ կազմակերպական-իրավական ձևից, սեփականության ձևից, կամ պետական կամ համայնքային հիմնարկից (Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետ):

Բնակչության բժշկական օգնության և սպասարկման հետ կապված իրավահարաբերություններում բուժաշխատողների մասնագիտական գործունեության պաշտպանությունը կարևորագույն խնդիրներից է, որը պահանջում է իրավական հստակեցում և ամրագրում: Բուժաշխատողները, որպես առողջապահական համակարգի առանցքային դերակատարներ, պետք է ունենան անվտանգ աշխատանքային պայմաններ, որոնք չպետք է ենթակա լինեն խոչընդոտման ոչ մասնագիտական, ոչ այլ արտաքին գործոնների կողմից: Նրանք հանդիսանում են մեր երկրի առողջապահական համակարգի հիմնասյուները: Իրականացնելով ծանր և պատասխանատու աշխատանք, ունենալով օրենսդրությամբ ամրագրված բազմաթիվ պարտականություններ, հաճախ բախվում են նաև այնպիսի խնդիրների հետ, որոնք որևէ առնչություն չունեն իրենց մասնագիտական գործունեության հետ: Մասնավորապես, բուժաշխատողներն իրենց մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում պարբերաբար ենթարկվում են բռնության, վիրավորանքի և բացասական այլ վերաբերմունքի:

2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած նոր քրեական օրենսգրքից (այսուհետ՝ Օրենսգիրք) հանվել է բուժաշխատողների նկատմամբ բռնություն գործադրելու կամ դրա սպառնալիքի հետ կապված հոդվածը (130.1): Նախկինում գործող հոդվածը նախատեսում էր պատիժ՝ տուգանքի կամ ազատազրկման տեսքով, սակայն գործող Օրենսգիրքը սկզբունքորեն այլ մոտեցում դրսևորեց վերը նշված իրավիճակի նկատմամբ: Գործող Օրենսգրքում առկա են ընդհանուր բնույթի հոդվածներ, օրինակ 71-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, 166-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, 167-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, 171-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, 194-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, 195-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ, որոնք արդեն իսկ քրեականացնում են այդ արարքները, սակայն այս հոդվածները չեն ընդգծում բուժաշխատողների՝ որպես հասարակության համար կարևոր խմբի, պաշտպանության անհրաժեշտությունը, չեն արտացոլում

հանցագործությունների առանձնահատուկ բնույթը՝ կապված բժշկի մասնագիտական պարտականությունների կատարման հետ: Առանձին հոդվածը կարող է ընդգծել դրա բարձր հասարակական վտանգավորությունը:

Առկա իրավիճակը մեծապես կապվում է համապատասխան երաշխիքների բացակայությամբ, մասնավորապես, քրեաիրավական ոլորտում: Եթե նման դեպքերը շարունակաբար տեղի ունենան առանց պատժամիջոցների, ապա դա կարող է հանգեցնել հասարակության կողմից բռնի արարքների նկատմամբ դրական վերաբերմունքի ընդունելիությանը, առողջապահական համակարգի և բժիշկների հանդեպ վստահության նվազմանը: Ըստ այդմ, անհրաժեշտություն է առաջացել վերանայել օրենսդրությունը և կրկին իրականացնել օրենսդրական հսկողություն վերոշարադրյալ

իրավահարաբերությունների առավել համապարփակ կանոնակարգման համար՝ բուժաշխատողների իրավունքների իրականացման երաշխիքների տեսանկյունից:

Առաջարկվող կարգավորման բնույթը.

Նախագծով ներկայացված առաջարկի հիմնական նպատակը բուժաշխատողների նկատմամբ իրականացվող ոտնձգությունների կանխումն է, անվտանգության ապահովումը և գործող օրենսդրության բացի լրացումն ու համապատասխանեցումը միջազգային չափանիշներին: Նախագծով առաջարկվում է ամրագրել դրույթներ, որոնք

պատասխանատվություն կառաջացնեն բուժաշխատողների օրինական գործունեությանը խոչընդոտելու համար, որը կապահովի գործնականում վերը քննարկված խնդրի լուծումը՝ դրանով իսկ երաշխավորելով բուժաշխատողների օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունը և հիմք կհանդիսանա մեր հասարակությունում ձևավորված արատավոր երևույթի նվազեցման, կանխարգելման, իսպառ վերացման համար: Օրենսգրքում համանման նորմեր գործում են, որոնք քրեական պատասխանատվություն են նախատեսում Մարդու իրավունքների պաշտպանի, դատավորի, դատախազի, քննիչի, քննչական մարմնի ղեկավարի, հետաքննության մարմնի, փաստաբանի, ներկայացուցչի, փորձագետի կամ հարկադիր կատարողի նկատմամբ բռնություն գործադրելու համար (հոդվածներ 490, 493): Վերը նշված հոդվածները հստակորեն առանձնացնում են պաշտոնատար անձանց և նրանց գործունեության հետ կապված բռնությունը՝ ընդգծելով դրա հանրային

վտանգավորությունը՝ նպատակ ունենալով պաշտպանել վերջիններիս մասնագիտական գործունեության ընթացքում բռնությունից, սպառնալիքներից կամ խոչընդոտներից: Օրենսգրքում պատասխանատվություն է նախատեսված նաև լրագրողների օրինական գործունեությանը խոչընդոտելու համար (հոդված 237): Հոդվածի էությունից պարզ է դառնում, որ մասնագիտական և աշխատանքային պարտականությունների իրականացման ընթացքում լրագրողին վիրավորելը առաջացնում է քրեական պատասխանատվություն: Թ՛եև այս հոդվածն ուղղակիորեն բռնություն չի ներառում, սակայն ցույց է տալիս, որ օրենսդրությունը ճանաչում է տվյալ մասնագիտության հատուկ կարգավիճակը: Հաշվի առնելով բուժաշխատողների գործունեության առանձնահատկությունները, անհրաժեշտ է սահմանել քրեական պատիժ նաև բուժաշխատողների նկատմամբ անհարգալից վերաբերմունքի և դրանից բխող հետագա գործողությունների համար: Բուժաշխատողի նկատմամբ իրականացվող ցանկացած ոտնձգություն խոչընդոտում է նրանց մասնագիտական և աշխատանքային պարտականությունների կատարմանը, ինչը ոչ միայն վնասում է վերջիններիս ֆիզիկական և հոգեկան առողջությանը, այլ նաև կարող է հանգեցնել աշխատունակության կորստին, ազդել շտապ բժշկական օգնությունը ժամանակին ցուցաբերելուն, հիվանդների խնամքի որակի վրա, ընդհուպ մինչև ստեղծել հիվանդի կյանքին սպառնացող վտանգավոր իրավիճակներ և այլն: Ավելին, բռնության դեպքերը ստեղծում են անապահով աշխատանքային միջավայր, ինչի արդյունքում բժիշկները կարող են հրաժարվել աշխատել որոշակի իրավիճակներում կամ հիվանդանոցներում, ինչը կարող է հանգեցնել բուժօգնության հասանելիության նվազմանը: Հետևաբար, առանց իրավական բազայի ապահովման խնդիրը չի ստանա իր համակողմանի լուծումը: Չունենալով ոլորտը կանոնակարգող իրավանորմեր, թույլատրվում է նման դեպքերի տագնապալի չափերի հասնելը: Լրատվամիջոցներն իրենց բազմաթիվ հրապարակումներում հաղորդում են հիվանդների կամ ընտանիքի անդամների կողմից բուժաշխատողներին բռնության ենթարկելու մասին1, առ այն որ վերջիններս ենթարկվել են ծեծի, վիրավորանքի, իսկ Գյումրիում շտապ օգնության բժշկի այցն ավարտվել է վերջինիս մահով2:

---

[1] Գ ու մրիու մ հերթակ ու սն բռնու թ յ ու ննն է սեղի ու նեցել բու ժ աշ խատողի նկատմ ամբ. վերջինը մտրմու սկան մն ասվ ածքներով ս ոեղ ս ստիպվել է հիվանդ ս ոնց. նս ս պ ստերս ազմի ս սկսիվ մասնակից է եղել : Փակել են սեկ ս ակներից մեկի դու ռը, դանակով սպառնացել . հերթակ ան բռնու թ ան դեպքը շտապօգնու թ ան բժիշ կների

ՆԳ նախարարության վիճակագրական[3] տվյալների համաձայն 2023-2025 թթ. ընթացքում բուժաշխատողներին բռնության ենթարկելու 27 դեպք է արձանագրվել,

ամենաշատ նմանատիպ դեպքերը գրանցվել են Երևանում: Երեք տարում արձանագրված 27 դեպքից 4-ը 2025 թվականի ընդամենը 2 ամսում է գրանցվել: Ընթացիկ տարում դեպքեր են գրանցվել Շիրակի մարզում (Ազատան գյուղ), Վայոց Ձորում (1 դեպք) և Երևանում (2 դեպք): Երեք դեպքերում էլ պացիենտների հարազատների թիրախում եղել են շտապօգնության բուժաշխատողները, մեկի պարագայում՝ հիվանդանոցի աշխատակիցները: Ըստ ՆԳ նախարարության տվյալների՝ 2023 թվականին «-ում բուժաշխատողների նկատմամբ 5-ով քիչ բռնության դեպք է գրանցվել, քան 2024-ին: Այնուամենայնիվ, շտապօգնության և հիվանդանոցների մի շարք աշխատակիցներ կրկին մարմնական վնասվածքներ են ստացել և ֆիզիկական ներգործության ենթարկվել: Ստեփանավան, Սևան, Աշտարակ, Դիլիջան, Վանաձոր և Երևան քաղաքներում պացիենտների հարազատները ագրեսիվ պահվածք են դրսևորել ու շտապօգնության բժիշկներին, վարորդներին ձեռքերով հարվածել են, նաև հայհոյել: «Ավագյան» (Երևան), «Կապան», «Վանաձոր» ԲԿ-ներում էլ 2023-ին բուժաշխատողների նկատմամբ բռնության դեպքեր են գրանցվել, որի ժամանակ վերջինները մարմնական վնասվածքներ են ստացել:

Վերը նշվածից ինքնին պարզ է դառնում նման դեպքերի հաճախականության հանգամանքը, ինչը վկայում է առողջապահության ոլորտում աշխատավայրում բռնության զգալի և տագնապալի միտման մասին:

Բուժաշխատողների նկատմամբ բռնության քրեականացման միջազգային փորձը տարբեր երկրներում ունի տարբեր մոտեցումներ՝ կախված օրենսդրական համակարգերից, մշակութային առանձնահատկություններից և առողջապահական ոլորտի մարտահրավերներից:

Նկատմամբ: Հայ հոյ ել են. եղել իմաց, ովքեր և ինչ ու են բժիշկներին բռնու թյ ան ենթարկել , մանրամասներ. տեսանյ ու թ

[2] Գ ու մրիի շտապօգնու թյ ան բժիշկը մահացել է՝ ենթադրաբար հիվանդի տղայ ի կողմից բռնու թյ ան ենթարկվել ով - MediaLab Newsroom-Laboratory:

[3] https://arm.sputniknews.ru/20250309/hajhvojanq-tsets-buzhashkhatvoghnerin-brnutjan-entarkelu-inch-depqer-en-eghel-hhum-3-tarum-86562578.html

Այս հարցը դարձել է առավել արդիական վերջին տարիներին՝ հաշվի առնելով բռնության դեպքերի աճը, հատկապես համավարակների (օրինակ՝ Շ(^1Ը-19) ժամանակ: Բուժքույրերի ազգային միավորման 2023 թվականի «Բուժքույրերի նկատմամբաշխատավայրում բռնության փորձի» վերաբերյալ զեկույը (այսուհետ նաև՝ Զեկույց)4 ցույց է տալիս բուժքույրերի կողմից աշխատավայրում բռնության աճի տեմպերը:

Մասնավորապես, Զեկույցում ներառված է 48 նահանգներում և Կոլումբիայի շրջանում աշխատող մոտ 1000 բուժքույրերի նոր տվյալները՝ (2023թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. դեկտեմբերի 31), կապված բուժքույրերի աշխատավայրում բռնության վերջին փորձի հետ, ինչը ցույց է տալիս, որ բռնության կանխարգելմանն ուղղված արդյունավետ ռազմավարությունների ձախողումը խորացնում է կադրային ճգնաժամը և 10-ից 6-ը կամ փոխում, կամ թողնում են իրենց աշխատանքը կամ մասնագիտությունը, կամ մտածում են այն թողնելու մասին՝ աշխատավայրում վերջիններիս հանդեպ գործադրվող բռնության պատճառով:

2012 թվականին ԱՀԿ-ն ընդունել է բանաձև5, որը կոչ է անում ուժեղացնել բուժաշխատողների և առողջապահական օբյեկտների պաշտպանությունը հակամարտությունների ժամանակ՝ ընդգծելով դրանց դեմ հարձակումների համակարգված փաստագրումը և կանխարգելումը: Բանաձևը կոչ է անում պետություններին և միջազգային կազմակերպություններին համագործակցել՝ բուժաշխատողներին և հիվանդներին պաշտպանելու համար: Բացի այդ, ԱՀԿ-ն իր պաշտոնական կայքում առանձին բաժին է 6 նվիրել առողջապահության ոլորտի աշխատողների վրա հարձակումներին՝ նշելով, որ բուժաշխատողների անվտանգությունը կենսական նշանակություն ունի հակամարտության գոտիներում բնակչությանը բժշկական օգնություն տրամադրելու համար:

2011 թվականին ԿՄԽԿ-ն սկսել է «Առողջապահությունը վտանգի մեջ» նախաձեռնությունը (Health Care in Danger (HCiD) Initiative) 7, որն ուղղված է առողջապահական հաստատությունների, բուժաշխատողների և բժշկական տրանսպորտային միջոցների նկատմամբ կատարվող բռության դեմ պայքարին, ինչպես

NNU report shows increased rates of workplace violence experienced by nurses | National Nurses United
Microsoft Word - A65_R20-en.docx

[6] Attacks on Health Care

[7] https://healthcareindanger.org/hcid-project/

նաև՝ զինված հակամարտությունների և այլ արտակարգ իրավիճակների դեպքում բժշկական ծառայությունների անվտանգ մատուցման ապահովմանը:

Այն ընդգծում է, որ բուժաշխատողների անվտանգությունը կենսական է՝ հումանիտար օգնություն տրամադրելու համար: ԿԽՄԿ-ն նաև հրապարակել է փաստաթուղթ8, որը մանրամասնում է միջազգային հումանիտար իրավունքի (IHL) դրույթները՝ բուժաշխատողների պաշտպանության վերաբերյալ: Այն հիմնված է ժնևի կոնվենցիայի վրա, որոր պահանջում է պաշտպանել բժշկական անձնակազմը հակամարտություններում:

Բացի այդ, վերջին տարիներին բազմաթիվ օտարերկրյա պետությունների կողմից ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ ուղղված բուժաշխատողների անվտանգության բարելավմանը, մասնավորապես՝ ի պատասխան նրանց նկատմամբ բռնության դեպքերի աճին, տարբեր պետություններ օրենքներ են ընդունել՝ ուղղված այս կարևոր խնդրի լուծմանը:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում այս հարցը բազմաթիվ օրենսդրական նախաձեռնությունների հիմք է հանդիսացել: Տարբեր Նահագներ սահմանել են պատասխանատվության տարաբնույթ նորմեր բուժաշխատողի նկատմամբ բռնություն գործադրելու համար: 2025 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտնել Կալիֆորնիայի ասամբլեայի 977 օրինագիծը9, որը նախատեսում է օրենսդրական զգալի բարելավում շտապօգնության բաժանմունքների բուժաշխատողներին բռնության գործողություններից պաշտպանելու համար: Օրենքով նախատեսվում է ազատազրկում՝ մինչև մեկ տարի ժամկետով կամ տուգանք՝ 2000 (երկու հազար ԱՄՆ դոլար), կամ երկուսը միասին:

Առավել խիստ պատասխանատվություն է նախատեսվում Ավստրալիայի օրենսդրությամբ: Օրինակ՝ Նոր Հարավային Ուելսի օրենքի համաձայն բուժաշխատողի նկատմամբ կիրառված իրավախախտումների համար 12 ամսից մինչև 14 տարվա

---

[8] Respecting and protecting health care in armed conflicts and in situations not covered by international humanitarian law - Factsheet | International Committee of the Red Cross

[9] New California Law Protects Emergency Department Workers

ազատազրկում է նախատեսվում՝ կախված հարձակման ծանրությունից կամ խոչընդոտից10:

Այսպիսով վերոգրյալն ակնհայտորեն վկայում է բուժաշխատողների նկատմամբ բռնության աճի և դրա հետևանքների վերաբերյալ համընդհանուր անհանգստության մասին: Տարբեր երկրներում այդ խնդիրը դարձել է այնքան սուր, որ պետությունները ստիպված են եղել ոչ միայն արձագանքել առկա դեպքերին, այլև կանխարգելիչ քայլեր ձեռնարկել՝ ապագայում նման իրավիճակներից խուսափելու համար, ինչը կարևոր է նաև մեր հասարակությունում:

Լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության և պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխության մասին.

Նախագծի ընդունմամբ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների նվազեցում կամ ավելացում չի նախատեսվում:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արսեն Թորոսյանի, Արեն Մկրտչյանի և Հասմիկ Հակոբյանի կողմից:

Ակնկալվող արդյունքը.

Նախագծի մշակման համար հիմք է հանդիսացել միջազգային փորձը, ինչպես նաև բուժաշխատողների նկատմամբ բռնության շարունակական դրսևորումները: Բուժաշխատողների նկատմամբ բռնությունը՝ որպես առանձին հանցակազմ դիտարկելու հիմքերը հիմնված են ինչպես նրանց աշխատանքի կարևորության, այնպես էլ հասարակության և պետության առջև ծառացած մարտահրավերների վրա:

Գործող Օրենսգրքում համապատասխան լրացում կատարելը կարող է ապահովել ավելի արդյունավետ պաշտպանություն և համարժեք պատասխան վերը նշված խնդիրներին:

Բուժաշխատողի մասնագիտական պարտականությունների կատարման ընթացքում բռնություն գործադրելու դեպքում պատիժ սահմանելու համար կարելի է համեմատություն

[10] https://www5.austlii.edu.au/au/legis/nsw/consol_act/ca190082/s60ae.html

անցկացնել գործող Օրենսգրքով արդեն իսկ պաշտպանված կատեգորիաների հետ, ինչպիսիք են պետական ծառայողները կամ ինչպես արդեն վերը նշեցինք՝ այլ մասնագիտական խմբեր: Պատճառը պարզ է՝ այդ անձինք ներկայացնում են պետական իշխանությունը, և նրանց նկատմամբ բռնությունը համարվում է ոտնձգություն պետության դեմ:

Սակայն ինչպես պետական ծառայողները, բուժաշխատողները նույնպես կատարում են հանրային նշանակության գործառույթներ: Եթե պետական ծառայողի դեպքում պաշտպանվում է օրենքի և կարգի գերակայությունը, ապա բուժաշխատողի դեպքում՝ հանրային առողջությունն ու մարդու կյանքը: Երկու դեպքում էլ արարքը վնասում է ոչ միայն անհատին, այլև պետության և հասարակության շահերին: Բուժաշխատողները, հատկապես պետական հիմնարկներում աշխատողները, հաճախ գործում են պետության անունից (օրինակ՝ շտապօգնության ծառայություններում), ինչը նրանց դարձնում է համեմատելի պետական ծառայողների հետ: Համեմատության մեջ դիտելով, կարող ենք փաստել այն հանգամանքը, որ սույն նախագիծը միևնույն արարքի կատարման համար առավել մեղմ կարգավորումներ է նախատեսում, քան օտարերկրյա բազմաթիվ պետություններ:

Ամփոփելով ամբողջ վերագրյալը առաջարկում ենք լրացում կատարել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի կյանքը և առողջությունը վտանգող հանցագործությունները գլխում: Նախագծով առաջարկվում է Օրենսգրքի 25-րդ գլխում՝ որը կրում է «Կյանքը և առողջությունը վտանգող հանցագործությունները» վերտառությունը, ավելացնել նոր՝ 187.1-րդ հոդված, որով պատասխանատվույուն է սահմանվում բուժաշխատողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու կամ նույն արարքը բուժաշխատողի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով կատարելու դեպքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 710 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ)
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Գևորգ Քոչարյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-1124-09.07.2025-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

15.08.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ